ՍՐԲԱԶԱՆ ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Սէր յառաւօտէն ճեմեալ
Իւր անձուկ ծագմամբն.
Ծագումն արեւեալ անուն,
Այն արուսեկին.
Մինթէ յայդ ի վայր վայրիդ,
Տաւիղ տարածեալ.
Կամ սիրոյ շրջան առեալ
Աստեղք մոլորեալ։
Նա ծով շաղին թաց առեալ,
Դուռն արեւ ելեալ.
Ծայրարձակ լերանց բարձանց,
Ցօղ տարածանիւր.
Արեւմտենի սեռի,
Լրմամբ լիացեալ.
Աղերս ձայնի առնէր,
Ի ծայրս արեւու.
Ի զարդ շաւեղից փայլեալ,
Ոսկեթել շողից.
Շող երփն առ երփին փողով,
Հովիտ շուշանի.
Զարդ փայլենազարդ փայլից
Գայր արեւելից։

Մի՛ դու նուաղենար լուսին
Զարդ գիշերայնոյ.
Ես սիրոյ պատգամս ունիմ
Գիր ողջունաբեր,
Լերին նմանեալ հովիտ
Սէր եղբօրորդւոյն.
Վարս մանրանձրեւով լցեալ
Ցեռմամբ մարգարտով։
Գանգուր ոսկեփող կիտուած
Սափիրանափայլ.
Այծեման նման դառնայր,
Ի խնկաբեր լերանց.
Զանուշահոտութիւն խնկոց
Ի մէջ տարածէր.
Եղնորթու նման հանգչէր
Ընդ քրքմօք տաւաղէր.
Ի միջօրէի գըտի
Խանդակաթ սիրով,
Բարձր ի վեր դիտին ննջէր,
Ընդդէմ փառանու։

Ով կանայք զարթիք տեսէք
Որով պսակեաց
Մայր աղեկիզեալ սիրով
Զորդին անդրանիկ.
Կանայք ի հանդէս արքոյն
Հանդէպ գիշերոյ,
Յորդոր թախանձեն զաղէտս
Տաւիղ տարակոյս։
Աւետիս ի տալ զուարդնոյն
Զայնէր զմով խնդրէք.
Այն նազովրեցին յարեաւ
Խաչեալն ի հրէից,
Հետեւող լինել բարեաց
Երազահասիւք
Ի ժամադրողին պայման
Լեառն Գալիլեա.
Դարձեալ խնդութեամբ գտին
Զրաբունին սիրով.
Զսիրով սիրելոյն ետոյն
Համբոյր ողջունի
Սիրով զարթուցեալ մերժեն
Զերկիւղ կասկածին.
Պետրոսեան դասուն
Հոյլ ի հոյլ ճեմին.
Ի յերեկորայ ժամուն
Դուռն աղխիւք փակեալ.
Դուք մի՛ երկնչիք եղբարք,
Ես եմ Տէր Յիսուս.
Բարձրաձայն գոչեաց Թումաս
Տէր իմ և Աստուած։
Դու ես ճշմարիտ փրկիչ
Որդին Աստուծոյ.
Քեզ միշտ վայելէ պատիւ
Ընդ Հօր և Հոգւոյն
Այժմ և յանվախճան ի փառս
Յաւիտեան։

ՏԱՂ ԽԱՉԻ

Ի յԵրուսաղէմ գընամ
Ի յայն աստուածաշէն քաղաքն,
Ի յայն գեղեցկաշէն տաճարն
Ի յայն շուշանի նման Սիոնն,
Անընմանի ո՞վ նըման, անընման։

Հաւիկ մի պայծառ կացեալ, ի յայն խաչաթեւին վերայ
Թեւս արծաթածալ ունէր, արեգական շողոյն նըման։
Զձայնիկն ողորմիկ ածէր, գաբրիէլեան փողոյն նըման։
Զաչերն արտասուօք լընոյր, առաւօտուն ցօղոյն նըման։
Ա՜յ գեղեցկագեղ հաւիկ, որ նստիս յայտ խաչաթեւին վերայ,
Զձայնիկդ ընդէ՞ր ողորմիկ ածես, գաբրիէլեան փողոյն նըման.
Զաչերդ արտասուօք է՞ր լընուս, առաւօտուն ցօղոյն նըման.
Ա՜յ գեղեցկագեղ հաւիկ, որ քեզ են աւետեաց հրաւէրս.
Դու սէգ (երգս?) խաղի առեալ ցնծա՛։

Ես խաչ կանգնեալ կամիմ, ի խաչ ելանել կամիմ։
Ի խաչ ելանել կամիմ, ի գերեզման մըտել կամիմ։
Զդժոխս աւարել կամիմ, յերրորդ աւուր յառնել կամիմ
Ցերկինս համբառնալ կամիմ, ընդ աջմէ Հօր նստել կամիմ
Միւսանգամ ես գալ կամիմ, զմեղաւորս կշտամբել կամիմ։

Այս երկու հոգեշունչ և զմայլելի տաղերը կը հրատարակենք մեր մատենադարանին թ. 912 գրչագրէն որ «Գանձարան և տաղարան» մ'է, և օրինակուած է, ինչպէս գեկուցինք «Բազմավէպ»ի նախորդ թիւին մէջ (Մարտ, 1932, էջ 100) Փարիզի մեկ ձեռագրէն ՈՃԴ = 1241 ին գրուած։

Աղուհասը՝ որով յօրինուած են՝ կարելի չէ արժանաւոր տաղերով բացատրել և վերլուծել. միայն այսչափ ասենք որ սքանչելի նրբութիւն և հնչականութիւն մ'ունին անոնք զաղափարներու շնորհալի շղթայումով և պատկերներու զուգագեղ յօրինուածով։ Թէեւ անծանօթ է հեղինակը, սակայն Նարեկի (իրեն ընծայուած տաղերուն և գանձերուն), Սարկաւագ վարդապետի և Շնորհալիի պէս հոգեշունչ և օծուն գրիչներու միայն կարելի է ընծայել զանոնք։

«Տաղ յարութեան»ը երեք մասերու կարելի է բաժնել։ Ա. մասը հովուական սրնգի աստուածաշունչ քաղցրութեամբ թռիչ մ'ունի, յարութեան արշալոյսի թրթռացում՝ լոյսի և սիրային զգացումներու։ Բ. մասը «Դու մի՛ նուաղենար լուսին»ը բուրումնաւէտ այգի, բուրաստան է, ուր եղբօրորդւոյն սէրը, այծեմանը, եղնորթը, միջօրէն, խունկն ու խանդակաթ սէրը համակ «Երգ երգոց»ը կը բուրեն։ Ցարաութիւն մ'է Աւետարանի յարութեան պարզ ու սրտագրաւ էջերուն Գ. մասը՝ որ նոյնպէս արուեստի, զարդացման և բանաստեղծութեան գեղեցիկ նմոյշ մ'է։

«Տաղ խաչի»ն նոյն ներշնչումներով, ոգեւորութեամբ և սիրային քնքուշ թալկացումով, յիշեցնել կու տայ Նարեկաւագ Վ.-ի քերթուածը Սարեակին վրայ, թէեւ հոս ոճի բարձրութիւն, և արուեստի անհամեմատ նրբութիւն կայ։

Այս երկու տաղերուն կը կցենք զոյգ մ'ալ «Տաղ Աստուածածնի» որպէս մայիսեան օրհներգ, այբուբենական կարգով գրուած։ Առաջինը կը գտնուի վանքիս գրչագիր թ. 3 «Խմբագիրք Թ»ին մէջ, «Տաղարան» մ'է նորագիր, հաւանօրէն ԺԶ-ԺԷ դարերուն։ Հեղինակն ըլլալու է Պօղոս վարդապետ մը, ինչպէս կը փորձուինք մեկնել վերջին չորս տողերու սկզբնատառերէն (Ի Տ[էր] Պ[օղոս] Վ.[արդապետէ])։

digitised by A.R.A.R.@